



աղքատ՝ տեղեկութեանց մասին, եւ զուրկ մանրամասնութիւններէ, այլ բազմաբղիւն հիմնադրին անունը ճոխ է իրական արդիւնաւորութեամբ» («Շողակաթ», 1956, էջ 373): Չեմ գիտեր թէ պիտի բաւէ՞ր իր այս շինարարութիւնը՝ սրբելու եւ չնչելու Կամախեցոյ վրդովեցուցիչ պատկերը: Սակայն Կամախեցի իր ժամանակագրութեան մէջ ինքն իրեն իրաւունք տուած է խարանիչ, անողորմ, անարդարացի տողերով անուանարկել իրեն հաճելի չեղող կամ իրեն հակառակորդ աշխարհական թէ եկեղեցական անձերը: Հակառակ իր անուանարկութեան հեղեղին՝ Թաղէոս եպիսկոպոս միակ որոշ յանցանքով մը կը ջանայ ամբաստանել: Այդ է «գաղտ ի գիւղերի կրօնաւոր արեղայ եւ քահանայ ձեռնադրելով, եւ ուղարկէր յԱլուս կողմն յիւրեանց գեղջոց միջուկն»: Արդ Կամախեցի իր յաջորդ խօսքերով կը հաստատէ՝ որ ինք այդ օճեակներուն դէմ պայքարած է, եւ սակայն ո՛չ օճեակները եւ ո՛չ ալ գիւղացիները իրեն ականջ տուած են եւ իր հրամաններուն հետեւած: Հաւանական է որ ինք Թաղէոսի հետ անձամբ ալ խրնդելը ունեցած ըլլայ՝ անոր ողջութեան: Կեսարացիին պաշտպան կանգնած է անոնց եւ հաւանաբար ատիկա իսկ պիտի բաւէր որ Կամախեցին սանձ չդնէր իր վերի ամբաստանութեանց համար: Իր անուանարկութեան մեծ մասը ցոյց կու տան անձնական շփման հակառակութիւն. բան մը որ խիստ հեշտութեամբ կարելի էր, քանի որ Երզնկայի Կապոսի վանքին նախկին երէց-եպիսկոպոս Թաղէոսը ճալարիններուն ասպատակութենէն փախեր եւ այս կողմերը եկեր է, անտարակոյս այս շրջանին գաղթական հայութեան հետ, որ Կամախեցի իսկ խօսքերով Երզնկայէն, Կամախէն, Ակնէն, Տիվրիկէն են եղած. որոնք ոչ միայն Ռոտմիթոյի, այլ եւ Պուրսայի նահանգի ու Նիկիոյի մէջ հաստատուելու են: Այս գաղթականներուն հետ եկած ըլլալու է անտարակոյս նաեւ իրենց հայրենակից Երզնկայի Կայիփոսի վանքէն

Թաղէոս-երէց եպիսկոպոսը, եւ դարձեալ այս գաղթականներուն հետ սերտօրէն յարաբերած է իրենց հայրենակից Կամախեցին: Այս երկու նկարագիրները՝ Կամախեցոյ եւ Թաղէոս Կապոսիի՝ կարելի է որ իրենց զօրաւորութեան եւ խստութեան պատճառաւ իրարու հետ չփոխարինուին: Եւ արդիւնքը՝ Կամախեցիի ատելախառն տողերը:

Ուրեմն չնորհակալ ըլլալով իսկ Կամախեցիին Թաղէոս եպիսկոպոսի մասին տրուած անփոխարինելի կենսագրական ծանօթութեանց համար, նոյն ատեն մենք լըրջօրէն քննելով՝ ստիպուած չենք հաւատ ընծայելու Կամախեցոյ անուանարկութեան նոյն այդ Թաղէոս եպիսկոպոսի մասին:

Այսպէս յաւելուածական այս տուեալներով կրնանք որոշակի ըսել՝ որ Թաղէոս նախ երէց էր եւ յետոյ եղած է եպիսկոպոս: Բնիկ Երզնկայի Կայիփոսի վանքէն, ուր հաւանաբար եպիսկոպոսացաւ, քանի որ երէցներ չէին կրնար վանքի մէջ ապրիլ ու միաբան ըլլալ. եւ ինք Սիմէոն դըպիր Լեհացիէ վը կոչուի «եպիսկոպոս Երզնկու Կապոսու վանից», անտարակոսելի ցոյց տալով՝ որ հոնկէ, Երզնկայի Կայիփոսի վանքէն եկած ըլլալու էր իբրեւ եպիսկոպոս: Թաղէոս եպիսկոպոս ծնունդեամբ հաւանաբար Երզնկայի գիւղերէն մէկէն ըլլայ, եւ իր կինը կորսնցնելէ վերջ՝ Կայիփոսի վանքը մտած եպիսկոպոսացած է:

Հաւանական է որ Թաղէոս էջմիածնի նուիրակ եղած ըլլայ: Ան Արմաշու շրջանակները չէ եկած իբրեւ իրական, այլ եկած է Երզնկայէն, Կամախէն, ձեւալիններու ասպատակութիւններէն փախստական, հայ գիւղացիներու հետ: Այս գիւղացիները հաստատուած են նորակառոյց գիւղերու մէջ, որոնց համար եւ օժանդակութեամբ՝ հաւանաբար Երզնկայի Կապոսի վանքը ի մտի ունենալով, Թաղէոս եպիսկոպոս կը հաստատէ Արմաշու նորաչէն վանքը, ինքնին համեստ ու փոքր, եւ մի-

այն երկու վանականներով, 1608 թուին, երբ Լեհացին այդ կողմերը կ'այցելէր եւ կը նկարագրէր:

Կասկած չի կրնար ըլլալ որ Թաղէոս եպիսկոպոս մեծ դժուարութիւններով միայն կրնար հիմնել վանքը. այսինքն՝ անոր հրամանադիրը ստանալ, եւ նիւթական միջոցներ ստեղծել, որոնք անտարակոյս մեծ մասամբ գաղթականներէն եկած ըլլալու էին: Հաւանաբար նոյնիսկ գաղթականները աշխատեցան վանքին շինութեան համար:

Լեհացին 1608ին վանքը շինուած կը գտնէր: Ենթադրենք որ Արմաշու այս վանաշինութիւնը 1605ին սկսաւ եւ 1608ին արդէն աւարտած լմնցած էր: Որով կը սրբադրուի Օրմանեանի եւ ուրիշներու ենթադրութիւնը՝ վանքը 1611ին շինուած նկատելու: Կը սրբադրուին նաեւ շրջանին գաղթականութեան ծագման մասին եղած սխալ ենթադրութիւնները:

Կամախեցի կը վկայէ որ վանքը եկեղեցականներ կը հայթայթէր իր շրջակայ գիւղերուն: Կը հովանաւորուէր Գրիգոր Կեսարացիէ, որ թշնամի էր Կամախեցիին: Այս թշնամութեան պատճառաւ ըլլալու է որ Կամախեցին խիստ անուանարկիչ տողեր գրած է այս շինարար Թաղէոս եպիսկոպոսի մասին: Հաւանական է որ Կամախեցիի տողերը քննախնդրութեան արդիւնք ըլլան միայն: Կամախեցին անձամբ չփման մէջ գտնուած է իր հայրենակից գաղթականներուն հետ, ինչպէս ի Ռոտմիթոյ, Կ. Պոլիս եւ նաեւ հոս Եալովայի շրջանին մէջ: Այս չփմամբ կ'երեւի ընդհարումներ ունեցած է իրեն պէս զօրաւոր անձնականութեամբ խիզախ եւ անահ հայրենակից Թաղէոս եպիսկոպոսի հետ, որ բնական է տեղի չի տար Կամախեցոյ միջամտութեանց իր իրաւասութեան տակ վկայութեան, իրեն կողմնակից ու հաւատարիմ գիւղացիներուն կրօնական կեանքին մէջ:

Կամախեցոյ վկայութեամբ այլեւս գի-

տենք նաեւ որ 1635էն առաջ մեռած էր Թաղէոս եպիսկոպոս, եւ չառ հաւանաբար թաղուած էր իր վանքին Արմաշու մէջ իսկ:

Այսպէսով համեստ նպատակ մը բերած կ'ըլլանք Թաղէոսի ծագման, ինքնութեան, կեանքին մասին, եւ զինքը պարտող անստուգութիւնը բաւական մը փարատած կ'ըլլանք: Գուցէ նոր թափ ստացած ձեռագրական ուսումնասիրութիւնները շուտով յաւելուածական տեղեկութիւններ տան մեզի՝ Թաղէոս եպիսկոպոսի կեանքին մասին:

Լեհացիի եւ Կամախեցիի արժէքաւոր վկայութիւնները, կարգ մը սխալ հետեւութիւնները Թաղէոս եպիսկոպոսի մասին՝ վերջնականապէս կը սրբադրեն:

Խիստ զարմանալի է որ Արմաշու վանքին մէջ չեն պահուած Թաղէոս եպիսկոպոսի մասին գրաւոր ժամանակակից նիւթեր: Անտարակոյս ըլլալու էր վանքին հիմնարկութեան համար անխուսափելի արքունի հրովարտակ: Ըլլալու էին Կ. Պոլսոյ պատրիարքութենէն կոնդակներ, թղթակցութիւններ: Սակայն ոչ մէկ վաւերացութիւն: Ըլլալու էին նաեւ հիմնարկութեան շրջանին մնացած ձեռագիր մը կամ երկուք: Սակայն ոչինչ չէ յայտնուած: Գոնէ հասարակ տապանաքար մը ըլլալու էր Թաղէոս եպիսկոպոսի գերեզմանին վրայ: Վերջապէս իրեն պէս իր ժողովուրդէն սիրուած առաջնորդ մը չէր կրնար առանց տապանաքարի մնալ:

Ինչո՞ւ այս լուսթիւնը: Ինչո՞ւ մինչեւ ժէ. դարու կէսերուն գալ՝ Թաղէոս եպիսկոպոսի մասին գրաւոր տեղեկութիւն, այն ալ աւանդաբար, գտնելու համար: Ասիկա քիչ մը տարօրինակ է՝ երբ նկատի առնենք որ Արմաշ իր հիմնարկութենէն անմիջապէս վերջ բարդաւածեցաւ: Արմաշ մօտ էր Պոլսոյ, եւ տեղաւորուելու կարողութիւն ունէր:

Առ այժմ ենթադրութիւններ միայն, որոնք չեն բաւեր լուսարանութեան համար: